Հավելված
Մասիս քաղաքային համայնքի
Ավագանու 2020 թ. մարտի 20-ի
Թիվ 40-Ա որոշման

ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019Թ. ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Եկամուտներ

Մասիս քաղաքային համայնքի 2019թ.վարչական բյուջեի եկամուտների տարեկան 592767.0 հազ. Դրամ առաջադրանքի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 645969.3 հազ. դրամ, կամ տարեկան մուտքերի առաջադրանքը կատարվել է 109%-ով, որից սեփական եկամուտների առաջադրանքը 262552.9 հազար դրամի դիմաց կատարվել է 315755.2 հազար դրամ կամ կատարվել է 120.3%-ով՝ :

1.Հարկային եկամուտներ

Հարկային եկամուտների գծով տարվա համար նախատեսված 146790.5 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 188167.6 հազ. դրամ, կամ մուտքերի առաջադրանքը կատարվել է 128.2%-ով, այդ թվում հողի հարկի առաջադրանքը կատարվել է 123.9%-ով, գույքահարկինը՝ 114.2 %-ով, գույքահարկ փոխադրամիջոցներից՝ 136.3%-ով, տեղական տուրքերը՝ 112.4%-ով, պետական տուրքերը՝ 146.9 %-ով:

Տեղական տուրքերի առաջադրանքը տարվա համար նախատեսված 11029.8,5հազ. դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 12402.2 հազ. դրամ, այդ թվում՝

ա/ Համայնքի տարածքում նոր կառուցվող օբյեկտների և շինությունների շինարարությունը սկսելու թույլտվության համար նախատեսված 1322.0հազ. դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 2773.0հազ. դրամ կամ կատարվել է 209.8%-ով:

բ/ շենքերի, շինությունների և այլ օբյեկտների վերակառուցման, վերականգնման համար նախատեսված 99.0 հազ. դրամի դիմաց մուտքերը կազմել է 36.0 հազ. դրամ, կամ կատարվել է 36.4%-ով, առաջադրանքը թերակատարվել է դիմողներ չլինելու պատճառով:

գ/ Համայնքի տարածքում գտնվող օբյեկտները քանդելու աշխատանքներ կատարելու թույլտվության համար նախատեսված 25,0հազ. դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 45,0 հազ. դրամ, կամ կատարվել է 180%-ով:

դ/ Համայնքի վարչական տարածքում ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար նախատեսված 3198,0հազ. դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 3072.8 հազ. դրամ, կամ կատարվել է 96.1 %-ով:

ե/ Համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կազմակերպման թույլատրման համար նախատեսված 600.0 հազ. դրամի մուտքերի առաջադրանքը կատարվել է 100 %-ով:

զ/ Համայնքի տարածքում բացօթյա վաճառք կազմակերպելու թույլտվության համար նախատեսված 280.0.0հազ. դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 682.5 հազ. դրամ, կամ կատարվել է 243.7 %-ով:

է/ Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտների, բաղնիքների (սաունաներ), խաղատների ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար համար նախատեսված 425,0հազ. դրամի դիմաց փաստացի մուտքերը կատարվել է 100%-ով:

ը/ Համայնքի տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար նախատեսված 3615.8հազ. դրամ, փաստացի մուտքերը կազմել է 3440.8հազ. դրամ, կամ կատարվել է 95.2%-ով:

թ/ Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առք ու վաճառքի թույլտվության համար նախատեսված 75,0հազ. դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 75,0հազ. դրամ, կամ կատարվել է 100%-ով:

ժ/ Համայնքի տարածքում ընթացիկ տարում մարդատար տաքսի ծառայություն իրականացնելու թույլտվության համար նախատեսված 30,0հազ. դրամի դիմաց փաստացի մուտքերը կատարվել է 100%-ով:

ի/ Համայնքի անվանումը ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար նախատեսված 350,0հազ. դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 300,0հազ. դրամ, կամ կատարվել է 85.7 %-ով:

լ/ Համայնքի տարածքում գտնվող խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար նախատեսված 240.0 հազ. դրամ, փաստացի մուտքերը կազմել են 300 հազ. դրամ, կամ մուտքերի առաջադրանքը կատարվել է 125%-ով:

խ/ Համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար նախատեսված 570.0հազ. Դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել է 622.2հազ. դրամ, կամ կատարվել է 109.2 %-ով:

Պետական տուրքերի առաջադրանքը նախատեսված 13000,0 հազ.դրամի դիմաց փաստացի կազմել է 19098.4 հազ. դրամ:

2.Պաշտոնական դրամաշնորհներ

Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիայի և սուբվենցիայի գծով փաստացի մուտքերը կազմել են 324817,3 հազ. դրամ, կամ կատարվել է 100 %-ով:

3.Այլ եկամուտներ

Այլ եկամուտների առաջադրանքը կատարվել է 109.8%-ով, կամ նախատեսված 121159.3 հազ. դրամի դիմաց, փաստացի մուտքերը կազմել են 132984.4 հազ. դրամ, նույն թվում՝ հողերի վարձակալությունից եկամուտները՝ 125.8%-ով, այլ գույքի վարձակալությունից եկամուտները՝ 110.4%-ով:

Պատվիրակված լիազորությունների համար պետական բյուջեից մուտքերը կազմել է 5396.8 հազ. դրամ, կամ կատարվել է 100%-ով:

4. Տեղական վճարների մասով բյուջեում նախատեսված 98423.0 հազ. դրամի դիմաց գանձումները կազմել է 97061.7հազ. դրամ կամ կատարվել է 98.6%, որից աղբահանության վճարների մասով 44640.0 հազ. դրամի դիմաց գանձվել է 40791.6 հազ. դրամ կամ կատարվել է 91.4%-ով: Համայնքի պատվերով՝ մանկապարտեզների, երաժշտական և գեղարվեստի դպրոցների կողմից մատուցված ծառայությունների դիմաց ծնողական վճարների մասով նախատեսվել է եկամուտ 7539.0 հազար դրամ, գանձումը կազմել է 7627.8 հազար դրամ կամ կատարվել է 101.2%-ով:

<u>Ծախսեր</u>

2019 թ. համայնքի բյուջեի վարչական մասի տարեկան ծախսերը կատարվել է 95 %-ով՝ 592767.0 հազ. դրամ առաջադրանքից կատարվել է 561022.5 հազ. դրամ, որից՝ վարչական բյուջեի ծախսերը ըստ ծրագրերի կատարվել են՝

Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով 136479.6 հազար դրամի չափով նախատեսված ծախսերը կատարվել է 94 %-ով: Շրջակա միջավայրի պաշտպանության համար 74980.0 հազար դրամի չափով նախատեսված ծախսերը կատարվել է 95 %-ով:

Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն դասակարգմամբ 22680.0 հազար դրամի չափով նախատեսված ծախսերը կատարվել է 64 %-ով:

Հանգիստ, մշակույթ և կրոն դասակարգումով 24903.1 հազար դրամի չափով նախատեսված ծախսերը կատարվել է 98 %-ով:

Կրթության ոլորտի համար բյուջեով 301407.4 հազար դրամի չափով նախատեսված ծախսերը կատարվել է 99 %-ով: Սոցիալական պաշտպանության համար 15350.0հազար դրամի չափով նախատեսված ծախսերը կատարվել է 99 %-ով:

Մասիս քաղաքային համայնքի 2019թ. ֆոնդային բյուջեի եկամուտները նախատեսված 367919.9 հազ. դրամի դիմաց կատարվել է 284063.2 հազ. դրամ, որից տարեսկզբի մնացորդը՝ կազմել է 135919.8 հազ. դրամ, գույքի և հողի իրացումից մուտքերը՝ պլանավորված 30236.0հազ. դրամի դիմաց՝ 89221.7 հազ. դրամ, ստացվել է կապիտալ սուբվենցիա՝ 58921.7 հազ. դրամ:

2019 թ. Ֆոնդային բյուջեի ծախսերը կազմել է 199577.4 հազ. դրամ, որից վարչական սարքավորումների (համակարգիչ, տպիչ, օդորակիչ, սառնարան) ձեռք բերման համար ծախսվել է 4833.0 հազ. դրամ, ն/թ.-ի 13շ-ի բակում բազմաֆունկցիոնալ խաղադաշտի կառուցման համար՝ 8801.5 հազ.դրամ, աղբամանների ձեռքբերման համար՝ 10725.0հազ.դրամ, գրադարանի գազատարի կառուցման համար՝ 439.2 հազ.դրամ, Մասիս քաղաքի 5,6,7-րդ թաղամասերի գազաֆիկացման աշխատանքների համար՝ 68678.9 հազ.դրամ, ավտոճանապարհային նշանների տեղադրման և ճանապարհային գծանշման նախագծային աշխատանքների համար՝ 800.0 հազ. դրամ, փողոցների գծանշման, խճապատման, հարթեցման և փոսային նորոգման համար՝ 2300.0 հազ.դրամ, Մասիս քաղաքի 5- 10-րդ փողոցների լուսավորության ցանցի անցկացման աշխատանքների համար՝ 37979.5 հազ. դրամ, փողոցների լուսավորման համակարգի լեդ և արևային լուսատուների ձեռք բերման համար՝ 4225.6 հազ. Դրամ, Մասիս Կայարանի թիվ 12 շենքի տանիքի հիմնանորոգման աշխատանքների համար՝ 3114.2 հազ.դրամ, 3-րդ թաղամասի 14 և 18 շենքերի բակերի բարեկարգման աշխատանքների համար՝ 16552.1 հազ.դրամ, թիվ 40 հանրակացարանի խմելու ջրագծի հիմնանորոգման աշխատանքների համար՝ 972.0 հազ.դրամ, թիվ 2 մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքների համար՝ 39656.7 հազ.դրամ , գրադարանի գրքային ֆոնդի համալրման համար՝ 499.7 հազ.դրամ:

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Դ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Ն.ՍԱՀԱԿՅԱՆ